

և պաշտամանց, որ նորա անհուն և ամենակարող Առթեան առջև քանի՜ խեղճ և պակասաւոր բաներ կարեն լինել: Առթէ՛ նա արդէն իւր սքանչելի ստեղծագործութեամբ կը փառաւորուի և իւր պատկանելի մեծարանք կներկայացնէ մարդոյ կամ մարդկան:

Ի այց ո՛չ արդեօ՛ք նոյն իսկ սքանչելագործութիւնք անգամ մարդոյս օրինակ և յորդոր կտան փութալ և բորբոքուիլ յաւէտ զգալ, գիտել և երախտագէտ լինել Աստուածային բարեբարութիւններէն: Ո՛չ ապաքէն մարդ միշտ կկարօտի Աստուածային խնամոց և ողորմութեանց, ուստի գոհութեամբ պարտաւոր է օրհնել Տէրը, խնդրել՝ որ միշտ հսկէ իւր վերայ և խնամէ, և աղաչել՝ որ ընդունի իւր աղաչանքները և երախտագէտ զգացմանց փառաբանութիւնքը, և այս մի՛թէ մեծ բան է նորա անչափ խնամոց, սիրոյ, անզին շնորհաց և առատաձեռնութեանց ի փոխարէն:

Մանաւանդ զի Աստուած կը հրամայէ մարդկան պաշտել զինքն, բայց ո՛չ առանց արտաքին գործողութեանց կամ պաշտամանց՝ արարողութեանց և ծիսից:

Յիշէ՛ Աբէլի, Նոյի, Աբրահամու և այլոց զոհագործութիւնքը:

Յիշէ՛ Ղևտական քահանայագործութիւնքը և հին ուխտին Տապանակը:

Յիշէ՛, զի եթէ Աստուծոյ անընդունելի և անհաճոյ էր կրօնական պաշտամունքները, ընդէ՞ր ուրեմն աշխարհի Փրկիչը Յիսուս Քրիստոս եկաւ և հաստատեց զայն աշխարհի վերայ, և զԹերին հնոյն լցուցանելով սփռեց ընդ ամենայն տիեզերս ի ձեռն Առաքելոց քարոզութեանն:

Յիշէ՛ վերջապէս, և եթէ հաւատաս Փրկիչ Մարդեղութեան անօրէնութեանց և փրկարար Խորհրդոց, ուրեմն գործովք պիտի ապացուցանես զայն հանդերձ սրբտեռանդն ջերմեռանդութեամբ և առանձնական և հրապարակական արտաքին պաշտամամբք և արարողութեամբք, որովք հոգին յարաժամ հաւատոյ աչաց ընդառաջ պատկերացուցանելով Աստուածութեան անհուն խորհուրդները, երախտիքները և անթիւ և այլ և այլ բարերար և շնորհական անօրէնութիւնքը, և ողևորուած և յափշտակուած առ Աստուած՝ միշտ կհետեի զբարիս սիրել, և բարի գործեր և այլոց նախանձելի օրինակներ հանդիսացնել, որով Աստուծոյ անունը յաւէտ և հանապազ մեծաւ և խորին իմն պատկառանօք պաշտելի և երկրպագելի կփայլէ յընդհանուրս, և առաքինութեանց քաղցր և անձկալի պրտուղները բազմաբեղուն և փառաւորապէս սփռեալ կպանծան իմարդիկ:

Պ և հրամ և արդատեօր  
Մանկունի.

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԹԷ Ո՞ՒՐ ԵՆ ԱԵՐԱՅԻ ԵՒ ՏԴՄՈՒՏ.

(ԺԱ ԽՈՒՆ ԾԱՅՐԵՐ)

Խօյի հարաւ — արևմտեան կողմումն է Անձախոյ կամ Անձահոյ ձորն, որի մէջն է Կոտօլ, այս ինքն Կոտոր բերդն կամ զիւղն, և նրա մօտովն է անցկենում Խօյի պարզ և վճիտ գետն, որ բերդի կամ զիւղի անունէն է վեր առած էս զեօի

անունը, կամ գետէն զիւղի անունն: Էս դեպք ձորէն դուրս գալիս թէք վում է դէպ ի հիւսիս, ու լեռների ստորոտների տակոյն փոքր ինչ ընթանալէն յետոյ շուռ է գալիս դէպ ի արեւելք, թափվում Խոյի գաշտը: Պ. Բաֆին ուշադրութիւն չէ դարձրած ոչ մեր նախնեաց մատնադրութիւններին և ոչ տառերի աղաւաղութեանը: Վիեննայ տպած 1857 ամի, Ատլաս — աշխարհացոյց տախտակի մէջը դրած է Քօթուր, որ արեւելի մօտ է Կոտոր բառին: Հ. Չամչ. հատ. Բ. երես 827, ասում է «Եւ Եհաս անդր (ի Հեր կամ ի Խոյ) ձնպոյ Ապխարիպ (Հանունի) և տեսալ թէ փակեալ են ամենայն կողմամբ, ոչ կամեցաւ մարտ դնել ընդ քաղաքին, այլ միայն եթող զնշանակ քաջութեան իւրոյ անդ, զի ուժգին հարմար բաղխեալ զպողոպտակի սուսեր իւր ի մեծ դուռն երկաթի, մխեաց խորագոյն», և անցքն Խոյի բնակիչ Հայրն աւանդութենէ մը նացեալ, ինձ ցոյց են տուած արևմտեան բերդի դուռն, որպէս թէ նշան կայ նրա վերայ մինչև այսօր: Հ. Ինձիճեանն իւր աշխարհագրութեան Հայաստան հատորումն երես 250, ասում է «Խոյ ի հնումն անկանէր ի Պարսկահայս կամ ի Հեր և Չարեանդ գաւառի Պարսկահայոց», Հաւաստի եմ այժմ, որ ամենայն ուշադրութիւնով կարգացողն համոզուի, թէ Հեր գաւառն ունէր և ունի համանուն Հեր, Խեր կամ այժմեան Խոյ քաղաքն, թէ ունէր Գերենիկի ժամանակն այդիներ և բերդ և երկաթէ դուռն, ինչպէս և մինչև ցայսօր ունի, թէ Արտազ և Հեր գաւառներն այլ և այլ գաւառներ են, և թէ Ղօթուր ըստ Պ. Բաֆին, այս ինքն Բորոտ գետն չէ համապատասխանում նրա երևակայեցեալ նշանակութեանն, ասելով թէ, պղտոր ջուր ունի, լրդային և ցեխոտ յատակով, և ինչ ընդհակառակն Խոյի ջուրն պարզ և ամենագովիկ է Ատրպատականի մէջին: Խոյի դաշտի աւարտուելոյ արեւելեան — հարաւային կողմումը, դէպ յանդիման Ընձահոյ ձորին, ընկած է մին ուրիշ լայնաբերան ձոր, այժմ Բաղըսակ-դերէտի անացեալ, ընդունում է իւր մէջն ուրիշ աղբիւրների և վտակների ջրերի հետ և Կոտոր գետը: Էս ձորովը Կոտորը քանի մի փարօսան դէպ ի արեւելք ընթանալէն յետոյ, թեկ-

վում է դէպ ի հիւսիս — արեւելք, ուրիշ ձորի մէջը մանկով, հոսվում է գնում հասնում մինչև մեր պատմական Մառական աւանը, ուր անունավում է ի նախնեաց Կարմիր գետ, արդարև կարմիր գոյն ունի և այսօր, և անշուշտ էս գոյնն ընդունում է վերան եղած լեռների կարմիր հողերէն: Կարմիր գետը Մառականի առաջովը վայր է հոսվում վարար և սրնթաց նեղ և քարքարոտ ձորերի մէջովն, թափվում է Երասխ գետը Շամբի ձոր գեղի մօտն. ուր է Սուրբ Ստեփաննոս Նախավկայի Վանքն (3): Թօմաս Արծրունին գեղեցիկ իմն նկարագրելով էս ձորն, ասում է երես 285. «Գագիկ արքայն Արծրունեաց վայր խաղացեալ ի Մառական աւան առ Կարմիր կոչեցեալ գետովն, որ ելանէ ի գետն Երասխ, շինէ և անդ ամրական տեղի դժուարամտուելի ասպատակող հինց և ինչ»: Չարմանայի առատ են էս ձորումը մինչև այսօր էլ վայրի էծերը, այժմեանը և կարաները:

Մառական աւանն, Արծրունի թագաւորների ձմերոցը, շինուած է Կարմիր և Տղմուտ գետերի խառնվելոյ տեղն, և ունի արևմտեան կողմումը ընկած լեռների մէջին մի դժուարանցանելի նեղ կիրճ, երկարութիւնն կէս ժամի ճանապարհ, և սորա մէջովն է անցկենում պատմական Տղմուտ գետը կամ Տղմուտ գաշտի գետն: Էս կիրճէն դուրս գալիս, ներկայանում է աչքիդ առջևն, ամենայն Հայի համար տխուր պատմական Աւարայրի դաշտն, որին այժմ Չորսի դաշտ են կոչում, և սրա հիւսիսային կողմի զխին այս ինքն վերջին, կայ փոքրիկ ինչ զառ ի վեր վերջիչեալ Կարայ-Չիաղին զիւղն, որի դաշտն խառն է Աւարայրի հետ: (Տես Առունկ օրագիր 1863 ամի Յունիս ամիս, համար 6 . . . . .) Ըստ որում Վարդանանց պատերազմն եղած է Արտազ գաւառի մէջը, վասն որոյ փոխադրուիք կրկին վերագառնանք Արտազ գաւառն, ու նախնեաց ասածները համեմատենք նրա այժմեան դրութեան հետ:

Թերևս պարոն Բաֆին երկրայի պատերազմը Արտազ գաւառումը պատահելոյ մասին, բերնեք

(5) Տես ճանապարհորդ. Ե. Եանի. Եգիպտոսի:

էստեղ ժամանակակից և ականատես Պաղար Փարպեցիի բառերը որ երես 118, ասում է. « Եւ երկրորդ ասէին թերևս անդ ի տեղուջն (ի Հեր և Չարևանդ գաւառին) վճարէին հլք զործոյն պատերազմի . . . սակայն ևս առաւել ստիպով եկեալ հասանէին զունդն Պարսից ի բարձր և բարձր հուպ ի գեղն, որ կոչի Արարայ, շրջաբնդ Կէրէ Տղմուտ դաշտին, զոր ընտրեաց (Մուշկանիւսալուուրդ) յաղագս երկիւղի զօրացն Հայոց, ապաւր պատասանի անձանց համարէին պատշաճ և ի Կիլիկիոյ զարկէն Բաղար, Եղիշէ ականատես և Աստղիկ և Թօմաս Արծրունին հաստատում են էս, միայն թէ Եւարարը նրանք դաշտ և Տղմուտ գետ են կոչում. Փարպեցին Վահան Մամիկոնէի համար, երես 223 ասում է. « Լսէին թէ զօրք բազումք խաղացեալ գայ ի Պարսից, եկեալ հասեալ են ի սահմանս Հեր և Չարևանդ գաւառի . . . փութացու և զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան . . . շուեալք ի Գունոյ զօրքն Հայոց, ըստ աւուրց օժեանացն, երթեալ հասանէին ի գաւառն Արտաղ, և մտնալք ի գունդն Պարսից ի գիւղ մի, որում անուն ներսեհագատ, և Արեմն այսուհետև կարելի չէ մտնածել, թէ էսպիսի պատմարաններն սխալուած չինին, և չկարողացան զանազանել Հեր և Չարևանդ և Արտաղ գաւառներն, Էնպիսի ազգային և երեկի պատերազմի անցքն գրեւ ժամանակն:

Ելժժ Արտաղ գաւառի մէջն երեկելն, այս ինքն Խանի նստելոյ տեղն է Մակու բերդն կամ քաղաքն, որ ընկած է ձորումը, իւր վտակի ձախակողմումը, մին լերան լէն պատառուածի մէջին, և լերան շրթունքները հովանի են անում բերդի մէջն տներին, ինչպէս կէս անկ հովանի հիւսիսէն, Մակուի լերան քամակումը մինչև Մասիսն, ոչինչ գաշտ կամ քաղաքի տեղ չկայ, բլներ էլ, ոչ Խոր վիրապէն և ոչ Հեռ Չարևանդ գաւառէն կարելի չէր զօրքին չուել: Մակուն ունի մին եկեղեցի, ինչպէս մտիս է նուիրած սուրբ Վարդանայ անուանը, ինչպէս և հին Պալազիտի եկեղեցին: Էս երկու քաղաքի և նրա գեղերի Հայերը տարին մին շարաթ կամաւոր, բայց սատակ պաս կպահան սուրբ Վարդանի համար Հովանքների վերջերքումը: Էս պան պա-

հում են մինչև ցարսոր և տեղանքից գաղթուած Ռուսաստուն Հայերը: Ռուսները վերջին պատերազմի ժամանակն Ատրպատականէն Հայերը գաղթելէն յետոյ դարձեալ մնացած են Մակուի բերդումն մերձ յիսուն գերգաստուն, Մակուի բարձր լերան վերայ փորագրուած են կարծեմ բեռնաձև տառեր, շատ բարձր լինելոյ համար, զժուար էր ինձ օրինակելն:

Մակուի ձորովն դէպ ի արևմուտք կէս ժամանակի ճանապարհ վտակի ձախ կողմովն գնալով, անցես կենում դէպ ի հարաւ վտակի աջակողմն մտնում մին ձոր Ծործոր ասացեալ, որի վերջով մին վտակ է գալիս խառնվում Մակուի վտակին: Էս Ծործորն քաւորք ժամ թերևս փոքր աւելի, քարքարոտ և խոխոմ ճանապարհով բարձրանալով պատահում են մին մեծ գեղն, որի արևմտեան կողմի լերան կողքումը կայ մին հրոսկայ եկեղեցի քարակուի, թէպէտ այժմ ամայն է, բայց երեւում է գաւթի սրբապի պատերն ու խուցերը ինչ ինչ աւերակ և ինչ ինչ կիսաւեր: Մակուի Հայերը և Մահմետականները անխոր կգան էստեղ ուխտ: Մակուի քահանայն ու Թարգետաւորացիոյ վանքի միաբանները հաւատացեալ էին ինձ, թէ էս է երեկի Չարպիսայ Ապիսկոպոսի Ծործորու վանքն, և թէ էս եկեղեցիի զօրութիւնովը ո՞վ դք նրա մտի անտառն, որքան և լինի, փէտ կարէ ու վառէ կպատժուի: Էս անտառը բաղկանում է քանի մի բարձրացոյն ծառերէ և հարիւրաւոր թուփերէ, սրա վերն բոխում է մին սառնորակ աղբերակ և թափվում է անտառի մէջը, ու անհետ լինում խիճերի մէջին:

Խնդրեմ բարեմիտ ընթերցողէն ներս մն, եթէ էստեղ փոքր ինչ շեղվիք մեր նպատակէն, ըստ որում ազգայն աւանդութիւններին կկերպարի, թող չտանք մնալ մտացութեան մէջը, 1843 թուին Մակուայ Ալիխանի որդիի հարսանիքն էր, վասն որոյ և մեծ բազմութիւն էր հրաւիրուած Ատրպատականի ամենայն քաղաքներէն, որոց մինն էլ ես էի: Սեպտեմբերի ակեղններին խանի եղբոր որդիների և հիւրերի հետ ես ևս գնացի օրսորդութիւն այժմի, վայրի էժի ու կաքաւի էս Ծործոր ասած ձորի կողմն, ուր շատ առատ են էս

կենդանիները նշանակուած էր էս Վանքի մօտի գեղումն, որի բնակիչները Հայ-հաւատաւորսն Մահմետականներ են, որսորդներս համար ճաշ պատրաստել: Աէս օրն անց էր փոքր ինչ, վերադարձանք որսորդութիւնէն, լսեցինք թէ մի շփոթ է ընկած ծառաների մէջը: Խորին Պարսկաստանցի ծառաներն անտեղեակ գողով ծառ կտրելոյ տեղական աւանդութեանը, հաւանելով անտառը և աղբիւրակի մօտը ճաշելոյ համար, վանքի ծառերէն կտրտել էին կերակուրներ պատրաստելոյ: Երկրացի Մահմետական ծառաները չհամարձակուելով յայտնի արգելիլ, դիմել էին Հայ սպասաւորներին Քալօ և Գասպար անուն Սրանք որքան խնդրել էին, Պարսիկները չէին լսել, վասն որոյ և մէջընդմէջ կուէր էր ընկել ու մինը զմինը թիւթով վիրաւորել էին: Բնիկ Մահմետականները կուէր հանդարտացնելոյ համար գնացել էին մօտիկ գեղէն փէտ էին բերել տուել նրանց կրնէրը մէք վերադարձանք, Հայերը ինձ և Պարսիկները խանի եղբոր որդիին դիմեցին: Հաս յորդօրեցինք հաշտութիւն չեղաւ, Հայերը խռոված վերադարձան Մակու: Մեր նստեցինք ճաշել, ուր մերձ քսան հոգիներ կլինէինք, բայց ծառաները կրկնապատիկ թերեւ եռապատիկ ըստ սովորութեան Պարսից: Ծառն երկար քաշեց, ըստ որում բողբ էս կրիտասարգիւնըր գինի խմող էին. վասն որոյ և արեւցան շատերը Մակուցի Մամատ Ալի խանի որդի Քուսէուտ խանը ևս հարիտ լինելով, իւր ծառաների միմին հրամայեց, գնա այս ինչ պար եկող մութրուպին ասան գայ պարէ: Մութրուպին ուշացաւ. նա կրկնեց իւր հրամանը քանի մի անգամ. տեսաւ չէ կատարւում, ինքը վեր կացաւ տեղէն, գնաց բերէ: Քանի մի բովալէից յետոյ վերադարձաւ, սիրտնած, շնչասպառ, անհանդարտ աչքերով, դողդոջուն ոտներով, ձեռներով, տեղը նստ'ց թէ չէ, միւս կողմէն ճիչ-աղաղակը բարձրացաւ, մինչ տեսանք Մութրուպի աղագանները բերեցին ձեռքին մեր առաջն լայով-կոծով ողորմելի մութրուպին, պորտի վերեւիցը վիրաւորուած, արխնը շթում էր, աղիքները դուրս թափած, աչքերը բաց ու խուփ անում, ձեռները, ոտները կրկնում, կիտակենդան, շանցաւ քանի մի բովալէ հոգին աւանդեց, էս

քանը յետոյ հասաւ Մամատ Հասին, որ հրաման գրեց Ատրպատականի կուսակալ իւր եղբայր Բէհմէն միրզին, հազար թուաման Պարսից դրամ, Մութրուպի արխնի գինն առնէ տայ ծնողներին, ճշմարտուեցաւ բնակիչներին ջերմուանդութիւնը դէպ ի աւանդութիւնը, Քալօ և Գասպար Հայերը ստացան Ալի-խանէն մին մին թուր պարգև, Ակսնը մերն, այս ինքն.

Էս Ծործորի վանքէն մի ժամէն աւելի գնում ես նեղ և տաժանելի ձորով բարձրանում ես մի լեռան գագաթէն շուռ ես գալիս բլուրների մէջովն, և յետոյ կրկու անջրդի հեղեղատ ու մին աղքատիկ Քուրդ բնակիչներով գեղ ես անցկենում, դարձեալ բարձրանում մի լեռան, որի գագաթն, ուստի անցես կենալոյ, քանզո՞ւմ հարթացրած ճանապարհ է բաց արած, և սպառաժի վերայ փորագրուած է, եթէ թիւն չեմ սխալւում, ՌՄՂԳ. թուին, ի ժամանակս առաջնորդութեան Սիմէօն Եպիսկոպոսի: Էս է էն ծերունի Սիմէօն Արքեպիսկոպոսը, որին Պարսից տէրութիւնը կամենում էր Գանիէլ Վաթուղիկոսէն յետոյ Վաթուղիկոս ընտրել, բայց Սիմէօնը հրաժարվեցաւ էս դահէն: Արա ժամանակն է նորոգուած Թագէտ Առաքելոյ վանքն ու խուցերը սրբատաշ քարով Արրաս Միրզայ Պարսից թագաժառանգի ծախսովն, որի յիշատակարանը քանզո՞ւմ մարմարի վերայ դրած է առաջնորդարանի դրանը:

Եւ էսպէս ճանապարհներով 5-6 ժամ Մակուէն երբեմն դէպ ի արեւելք, երբեմն դէպ ի հարաւ դիմելէն յետոյ, հասանք մի վտակի, որ իջանում է մի բլուրի կողքիցը: Վտակի ձախ կողմումը լայնացրած ճանապարհ և աշակողմումն է մի մեծ շքեղ մատուռ, ի նչ սուրբի նուիրած, մոռացել եմ, Մատուռի վերնն է վանքի ջաղացն ուռնի ծառերով պատած: Բարձրանում ես էս դարի դուսը, հասնում ես ջաղացի մօտն, առջեղ բացւում է պատմական Հաւարչանի դաշտն, որի հիւսիսային կողմումն է կառուցած հոյակապ դեղնագոյն սրբատաշ քարից սուրբ Թագէտ Առաքելոյ հոյակապ վանքը. քանի կաթուղիկէ լինելը մոռացած եմ. մտիս է միայն մայր և զանգակատան կաթուղիկէքն: Քաղաքէն մին ասպարէզ գնալով, հասանք գեղն ու վանքի պարսպի

դուռն, ուստի երկու ասպարէզ ճեաւորութիւնով դէպ ի հարաւ — արեւմուտք է Շաւարշան գեօղաքաղաքի աւերակները և գերեզմանատունը ոչ ճեռի նրանէ:

Շաւարշան կամ Արտազ գաւառի համար ասում է Խորենացին Բ. 3. «Ի գաւառն Շաւարշան, որ այժմ Արտազ կոչի», Բ. 49. «Հրամայեալ ընակեցուցանել (զԱլանս) ի հարաւոյ արեւելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարշան գաւառ, ի վերայ պահելով զբնիկ անունն (երկրին Ալանաց) Արտազ, քանզի և աշխարհն, ուստի գերեցանն, Արտազ կոչի մինչև ցայսօր ժամանակի», Յիշատակվում է Թաղէոս Առաքելոյ Տին Ակայարանութեան Ճառնարումը (Մտորագ. Հին Հայաստ. Հ. Ինճիճեանի երես 202). «Հասանէ (Թաղէոս Առաքելն) յաշխարհն Հայոց առ թագաւորն Հայոց Սանատրուկ ի գաւառին Արտազ Շաւարշան, յապարանս արքունի, ուր էին հոյժաց գետինք թագաւորաց Հայոց», Խոր. Բ. 71. Ճառնարիք և Յայսմաւուրն Նոյեմբերի 18 էս տեղ են հաստատում Թաղէոս Առաքելոյ նահատակութիւնն ու սուրբ Լուսաւորչի յղութիւնն: Անտարախուսելի է, որ Թաղէոս Առաքելոյ նահատակութեան տեղն ու նրա վանքը յօրէ անտի շինութեանն, եղած է և կայ մինչև ցայսօր մի և նոյն տեղումն, և անբնդատ շարունակուած է նրա Նպիսկոպոսութիւնն մինչև ցայսօր, և նախապատիւ է եղած Հայաստանի Եպիսկոպոսների մէջին: Հայր Զամեանը նախնիքների հեղինակութիւններէ առնելով ասում է (հատոր Բ. երես 328) թէ 625 Փրկչի թուականին «էառ Եզը (Ասթուղիկոսն) զոմանս Եպիսկոպոսաց և ի Աարգապետաց, զՏրիտուր Արքեպիսկոպոսն Արաազու, զԲրիտապիոր Եպիսկոպոսն Գարունեաց ևլն. ևլն.» : Թումաս Արծրունին երես 290, ասում է «Գրէ առ Եպիսկոպոսն Գրիգոր Ամատունեաց, որ նստէր ի հանգստի սրբոյն Թաղէոսի Առաքելոյ յԱրտազական գաւառի», Նոյն երես 251, «Եւ ինքն Խուրան առեալ մասն զօրուն գնաց ի Շաւարշան Սանատրուկ» :

Ին Շաւարշան գաղտը, հիւսիսի կողմէն, այս ինքն Աւանքի, պատած է բլուրներով, լեռներով մինչև Մակու, և արեւմտեան կողմէն ևս լեռներով

մինչև մին օրվան ճանապարհ: Գաշտի լայնութիւնն այս ինքն արեւմտից ցարեւելքի լեռներն մին ժամէն փոքր պահաս ճանապարհ կլինի: Էս արեւելքի լեռների, որն Սանատրուկ էին ասում, քամակին է Գերատի, այս ինքն Մակուի դաշան: Աւանքի ծերունի, մերձ Խոթանասուն տարեկան ծեր, պարթև հասակով և խօսուն Սիմէօն Աարգապեան Բուրդ վերակոչեալ, որ էր ձեռնասուն տիրացու վերոյիշեալ Սիմէօն Եպիսկոպոսի, ձիււորակցու ինձ հետ՝ գալ ցոյց տալ նուիրական Աւարայրը և Տղմուտը: Աւանքէն դուրս եկանք Շաւարշան գեօղաքաղաքի մօտէն անց կացանք գնալ դէպ ի հարաւ: Սա տեղեակ էր Թաղէոս Առաքելոյ նահատակութեան պատմութեանը. ինչպէս իւրեան ուխտի ժառանգութիւն, շատ անգամ էլ Աղաթանիղոսի, Եղիշէի, և Յայսմաւուրքի պարբերութիւններէն անգիր էր ասում, որ նշան էր տեղեակ լինելոյ և ազգային պատմութիւնների. ինձ ցոյց էր տալիս երկարօրէն աւանդութիւնէն մնացեալ, ինչ տեղ մեր թագաւորների առաջին իշխանացները ձի կտաղացնէին, ուր այժեանը պարանը շինքումը կարձակէին և թագաւորները հետեակ կամ ձիււորված նետով բազէով կամ նիզակով կզարկէին, ուր է եղած թագաւորների կամ երեւելի նախարարների, իշխանների պալատները անուն անուն, կամ նրանց զուակների վրանների տեղը, ուր Լուսաւորչայ յղութիւնն, Սանգուխտ կուսի նահատակութիւնն ևլն. ևլն. որոնց շատը ախտոս մուացել են:

Մերձ մին ու կէս ժամ գնալէն յետոյ, հասանք լեռների տակը, բարձրացանք դէպ ի վեր մին ոչ բարձր լեռն, շուտ եկանք միւս երեսը, անջրդի մանր հոյժտների, ձորերի մէջովն, բլուրների կողքովն, անբանած երբմն, ոչխարի հետքի ճանապարհներով երբմն, երկու ժամէն, թերևս աւելի ևս, յետոյ հասանք Աարայ-Զիաղին գեղն, որի արեւմտեան կողմէն անց է կենում Ակ-սու գետն, որ գալիս է Զօրաւոյ գեղէն, և Խօյէն գացողն պէտք է անց կենայ էս գետն ու մտնէ Աարայ-Զիաղին: Գետակի ամուտը այս ինքն օրա աջակողմումը կայ մին ընդարձակ դաշտ չէին ստացեալ խոտաւէտ ձախին, բազկացած սև կաւից, տղմուտ է-լուր, և ըստ ասութեան Սիմէօն Աարգապետի

լճակի տեղ եղած, քանի մի հարիւր տարի յա-  
 ռած սրա կըքէն քարհիղ է տարած էս տեղաց  
 դէպ ի Զօրս, վասն որոյ և սկսել է փոքր առ  
 փոքր շորանալ: Նոյն Աարդապետն հաստատում  
 էր թէ, Տղմուտ դաշտն սկսում է էս գեղի առա-  
 ջէն զառ ի վայր գաշտն արևելեան կողմէն մինչև  
 Փառնակ, և հարաւային կողմէն մինչև Զօրսի  
 գաշտն, և Վարայ-Զիաղինէն նայում ևս դէպ ի  
 հարաւ, տեսնում են բացի էս գեղի գաշտէն, այլ  
 ևս խառն էս գաշտի հետ երկար որչոր շրջա-  
 որ է Զօրսի դաշտ այժմ՝ կոչեցեալն, այս ինքն  
 Աւարայրն, և թէ, ի հետց աւանգութիւն ու-  
 նինք Վարայ-Զիաղինէն դուրս գալիս, միաբանքս  
 եթէ ոչ բարձր ձէնով երբ Մահմետական լինի  
 մեզ հետ, զոնէ լուռ մտնջ պէտք է Աարդանանց  
 նահատակութեան շարականն երգենք էստեղ,  
 ինչպէս էլ մեզ մօտ երգեց և Հոգեոց ասեց,  
 Երևում է Փարսեցիի ասածէն, որ ոչ միայն  
 գետն, այլ և դաշտն ևս Տղմուտ էր կոչվում,  
 Զօրսի դաշտ ասացելոյ դիրքն ասենք համառօտ,  
 Վարայ-Զիաղինի կողմէն այս ինքն հիւսիսի կող-  
 մէն փակած է Զօրսի դաշտն կէս մասով, եթէ  
 չասենք երրորդն, բլուրներով, մնացեալն տափա-  
 ղակ Մակուի և Փառնակ գեղի դաշտի հետ  
 խառն դաշտովն: Էս վերջին գեղն ընկած է դէպ  
 ի արևելք, փոսի մէջ տափարակ տեղում, Վա-  
 րայ-Զիաղինէն մին ժամաչափի հետի, հոդն է սև  
 կաւ, ուր զարմանալի ցեխ է լինում, ինչպէս ինքս  
 տեսած եմ: Զօրսի արևմտեան կողմն է փակած,  
 երկար ընկած, ինչպէս գօտի, լեռներ է, որի լան-  
 ջի վերայ ընկած է Զօրս ցիւղաքաղաքն, և վեր-  
 ջանում է հարաւային կողմի լեռների մօտը, Հա-  
 րաւային կողմի բարձրագոյն լեռները հուսի եկած,  
 գնում է մինչև Մառական աւանի կիրճն, ուր իթէ  
 հարիւրական զօրական կանգնի պատերազմի ժա-  
 մանակն, անհետար է թշնամեոյն Զօրսէն Մառա-  
 կան, Մառականէն Զօրս անցանել: Դաշտի արև-  
 ւելեան կողմի լեռներն Մառականի կիրճէն գնում  
 է զծած մինչև Փառնակ գեղի մօտն, ուր սկսում  
 է հուսի գալ Վարայ-Զիաղինի մօտը: Աւերմն որ-  
 պէս ասացի, Փառնակ գեղէն մինչև Վարայ-Զիա-  
 ղին է շրջափակող զուռն, ուր է և Տղմուտ  
 գետն կամ դաշտն, ուստի և Հայերի գունդն կա-

րող էր յարձակուիլ Պարսիկների բանակի վերայ,  
 և ուր կարող էր Անտեկոստէի Աւրաթօ որը ե-  
 ւանել Արտաշատ ցեղաքաղաքէն ու հասնել:  
 «Իսկ ի յաւուր ուրաթօու ձեծի տօնին Անտե-  
 կոստէին դիմեալ, հասանէին մերձ ի նոյն տեղին  
 զօրքն Հայոց, գտեալ անպատրաստագոյն զզօրն  
 Պարսից», Ազգար Փարսեցի, երես 8:  
 Վարայ-Զիաղինէն գետն ընթանալով դէպ ի  
 հարաւ ժամաչափ, բաժանվում է երեք յառաջ  
 կամ առու: Էս առուների մինը գնում է արև-  
 մտեան կողմէն Զօրսի մօտովը լեռանց կողքովը  
 անցկենում ուղղելով էն կողմի գեղերի հանդերը,  
 հասնում է Մառականի կիրճն: Երկրորդ առուն,  
 որի սաստիկ ցեխտու լինելոյ համար, կարաւանների  
 անց կենալու կողմի թուփերը զգուշութեան մա-  
 սին, շատ բարձրացած է առուի մէջի ցեխտոյն ու  
 քարերով, գնում է մինչև Մառականի կիրճն:  
 Երրորդ յառաջն, կամ լաւ ևս ասած, իսկական  
 գետն կամ վտակն, որ դաշտը կէս է անում, մէջ  
 տեղովը գնում է ևս մինչև Մառականի կիրճն  
 ու ընդունում իւրեան մէջն արևմտեան ու արե-  
 ւելեան կողմերի առուները, ամառն աւելորդ և  
 ձմեռն բոլոր ջրերն, և մտնում կիրճն, գնում  
 Մառականի մէջովը, խառնվում Վարմիր գետին,  
 որին Հ. Ինճիճեանն Աշխարհագրութեան Հայաս-  
 տան հատորի մէջն երես 251, Խօյէն հոսիկոյ  
 համար դարձեալ սխալմամբ Վօտոյ է անուանում,  
 ինչպէս որ և երես 259, Անձաջոյ ձորն անուա-  
 նում է Վօտոյայ ձոր: Զօրսի դաշտի երկարու-  
 թիւնը պէտք է երկու մղոնէն աւելի լինի, և լայ-  
 նութիւնը մին ու կէս մղոն: Տասնէն աւելի գե-  
 ղեր կան էս դաշտի և լեռների լանջերի վերայ,  
 երեք յառաջի վտակների վերայ հարիւրէն աւելի  
 նեղ ու լէն փայտէ կամուրջներ կան շինած: Ամեն  
 առուները տղմուտ լինելոյ համար, հետեակ մարդն  
 անգամ չէ կարող անցկենալ որքան և ջուրը  
 ծանծաղ լինի, անջուր ժամանակն էլ տղմերին  
 նայելիս մարդ սարսափում է, վասն որոյ և շատ  
 անգամ ինչպէս պատմեցին (թէ և չպատմէին, ինքն  
 ինքեան երևում էր) ոչ միայն անասուններ, այլ  
 և օտար մարդն անձանօթ գորով կարմեջի, ոչ  
 միայն ամառն, այլ և ձմեռն անգամ, անցկենա-  
 լիս խեղդուած է էս առուների մէջին, այն ինչ

սառուցքը կտարվիլ է նրա սօսի տակին: Եւ թէ երբեմն դրոսի էծերի ձայերը լէն առուններէն մայրերը թռչելէն յետոյ անկարող գորով թռչել, ընկնում են առունների մէջ ցցվում ցիկումը: Էն երկու մեծ առունները շնն բնական, այլ երեւում է, որ յետոյ են վերառուած իսկական գետէն: Էս դաշտի վերայ ընկած գեղերումն ութն օր հիւրընկալուած լինելով գիւղատէրերէն այծեմի, դրոսի էծի և կաքաւի որսորդութեան համար, մնացած է մտքումն ամեն նրա դրութիւնն: Երեւելի է Մատականի քամակի դէպ ի նրա հիւսիս ընկած սարերի վերայ այծեմի պորտիցը հանած մուշկ սառուած քարացեալ արիւնն, որ դեղի համար թանկ է վաճառվում Ետիպուսը: Սրա վերայ շատ առասպելներ կան հնարած, շատից մինը ասելը: Ըստ որում Վարդանանց պատերազմից յետոյ է յայտնուած, ասում են, էս քարացած արիւնը այծեմների պորտի վերայ, վասն որոյ և ի շնորհս Էն սուրբերին է էս յառաջ եկած, այս ինքն ինչ այծեմանն երեք օր արածել է (ըստ այլոց 7 օր) Էն տեղ՝ ուր նահատակուել են Վարդանանք, նրանց արիւնի շնորհքովն է բաղկանում այծեմի պորտի վերայ Էն արիւնը ու լինում բրժըշկութիւն անտաճեցաց և լին:

Պատերազմական արհեստին անտեղեակ մարդն անգամ նկատելիս էս Զօրսի և Վարայ-Զիազինի դաշտերն, իսկ և իսկ կհամոզուի, որ էստունը են Աւարայրի և Տղմուտ դաշտերը, և շատ յարմար են թշնամիներէն պատասպարուելոյ համար: Մականցով Սամսոն խանը Ռուսաստանէն փախած ու Պարսկաստան երևելի զօրավար եղած, պատմեց ինձ ականատես գողով թէ, Ռուսների և Պարսիկների վերջին պատերազմի ժամանակն, երբ Աբրաս Միրզայ թագաժառանգն յաղթունցաւ Ռուսներէն Արարատեան դաշտի վերայ, անցանելով Երասխն և Մակուայ դաշտն, ահէն ուղիղ չղիմեց դէպ ի Խօյ, էս Զօրսի դաշտը Խօյի բերդէն գերազանց համարելով, մտաւ էստեղ ամրացաւ և Մատականի կիրճն էլ զօրքով կապեց, կասկածելով կնեազ Էրիստով զօրավարէն որ չլինի թէ Գերգէրի կամ Մարանդի կողմէն յարձակուի իւրեան վրէն: Երբ Ռուսները որոնք հետևում էին Աբրաս Միրզային, Վարայ-Զիազինի

դաշտն, տեսնելով տեղի անյարմարութիւնը պատերազմելոյ համար, մանաւանդ որ Պարսիկները էս գեղի գետ Ալ սուն թողել էին դաշտի վերայ, սաստիկ ցիկս էր եղլ, ուստի Ռուսների զօրքին չուկն անկարելի էր, վասն որոյ անցկացան գնացին դէպ ի Խօյ, Էն ժամանակն էլ Աբբայորդին բանակով չուում է անցկնում Մատականի կիրճը և Վարսիր գետը, բանակվում Եկան (Թեքուս նկան) բերդի առաջին, էստեղաց Մարանդ և Թավրեզ:

Վաղար Փարպեցին զարմանալի համառօտ և ճիշդ է նկարագրում էս նուերական Աւարայրի կամ Զօրսի դաշտն, և որպէս երևում է՝ տեսած է եղած: Վասն որոյ և կրկնելն էստեղ նրա բաներն աւերող չեմ համարում: Երես 118 ասում է. «Մակայն ևս առաւել ստիպով եկեալ հասանէին (ի Հեր և Զարեանդէն) գունդն Պարսից ի գաւառն Արտազ, հուպ ի գեղոն որ կոչի Աւարայր: Ի շրջանի որդի Տղմուտ որդի, զոր ընտրեաց (Մուշկաննիսալաուրդ) յաղագս երկիւղի Հայոց, որոք որոնք անձանց համարէին պատշաճ, և ի հիշի նոր թէլ բանակէին»:

Էս ևս չէ պէտք մոռանալ, որ Վարայ-Զիազինը ու Փառնակ գեղերը մինչև ցայսօր Արտազ գաւառի այս ինքն Մակուայ խանութեան վիճակն են: Արտազ գաւառէն դէպ ի Հեր և Զարեանդ ճանապարհորդելոյ համար բաց ի Վարայ-Զիազինի և Մակուայ դաշտէն ուրիշ տեղ էն պիտի ընդարձակ դաշտ չկայ, ուր միմիայն մին կողմէն, այս ինքն Հայերի վաթսուն և վեց հազարեայ բանակ կարողանար զետեղվիլ, ուր մնաց Պարսիկներէն: Ի վերջոյ էս ևս ասեմ, որ մեր պատմիչներն յայտնի ասում են թէ Պետրեմովիչի հիշատակն որը Արտաշատ քաղաքէն այս ինքն Խոր վերապէն (Չանչ: հատ. Բ. կրես 67) սուրբ Վարդանը վեր առաւ Հայերի գունդն ու հասաւ Արտազ գաւառի Աւարայր պիղը կամ դաշտը, և շարաթի օրը պատերազմն արին, այս ինքն մին օրվան ճանապարհ, այն ինչ մինչև Խօյի հարաւակողմն ցըռանքաբէլ հարկաւոր էր երեք ու կէս, թերևս չորս օրվան ճանապարհ: Մի մեծ բանակի համար էտիտի ճանապարհորդութիւնն ան

